

## ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ. ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ, ԱՊԱԳԱՆ

### ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ՄԵԿՈՒԿԵՍ ՏԱՐԵԿԱՆ Է

#### ՌՈՒԶԱՆ ՄԻՄՈՆՅԱՆ

Ներկայում գիտության բյուջեն շատ սուղ է. նրա պետական մասը, գրանտային ծրագրերի և տարբեր պատվերների գումարը միասին 37-38 մլն դոլար է: Գիտության բյուջեն կազմում է երկրի համախառն ներքին արդյունքի 0,22 %: Մինչդեռ, Եվրամիության երկրների միջին չափանիշով այն կազմում է ՀՆԱ-ի 1,8%, իսկ ԱՄՆ-ում՝ 3%:

Խորհրդային Միության փլուզումից հետո ֆինանսավորման դադարեցման, պատերազմի և սոցիալական կտրուկ անկման պատճառով գիտությունը հայտնվեց ծանր վիճակում: Հանրապետության 27000 գիտնականներ հանձնվեցին բախտի քմահաճույքին: Առավել մրցունակները լքեցին հայրենիքը: Գիտության վերակենդանացման առաջին փորձն արվեց 1994 թ-ին: Այն ժամանակ ֆինանսավորումը կազմում էր 3 մլն դոլար: 1996- 2000թ. գիտնականների մի մասը «նստեց» գրանտների վրա: Այնուամենայնիվ կայուն անկումը տևեց մինչև 2000թվականը: 2000 թ-ից հանրապետությունում նկատվեց տնտեսական վերելք, Գիտելիքի առաջնահերթության մասին գրում էին և խոսում: Կարծես թե հանրության համար ընկալելի դարձավ այն միտքը, որ գիտությունը պետք է զարգացնել և ստացված արդյունքներն օգտագործել տնտեսության մեջ:

ՀՀ Գիտությունների ակադեմիայում ավանդույթներ էին ձևավորվել, նվաճումներ արձանագրվել, հատկապես կիրառական գիտության մեջ: Նոր ժամանակներում ակադեմիան պահպանեց հին կառուցվածքը՝ համակարգելով գիտությունը իր ենթակայության տակ գտնվող ինստիտուտներում: Սակայն կային նաև մոտ 28 ճյուղային օջախներ, օրինակ՝ ֆիզիկայի, ամինաթթուների ինստիտուտը, որոնք ենթակա էին տարբեր նախարարությունների: Ակադեմիան, որը սկզբունքորեն կարող էր ստանձնել ողջ գիտության համակարգման գործառույթ, չարեց դա: Գիտական տարբեր օջախներ անհամաչափ էին ֆինանսավորվում: Ահա ինչու որոշվեց ստեղծել համակարգող կառույց, որը կմշակի և կիրականացնի պետության գիտության զարգացման քաղաքականությունը և ռազմավարությունը, մշակել 36 ակադեմիական և 28 ճյուղային ինստիտուտների, տարբեր գիտկենտրոնների և լաբորատորիաների ֆինանսավորումը:

2007 թվականի վերջին ԿԳ նախարարությունում ստեղծվեց Գիտության պետական կոմիտե՝ 43 աշխատակցով: Հաջորդ քայլը գիտական ինստիտուտների անձնագրավորումն էր, որը ուսումնասիրեց ինստիտուտների աշխատակազմը,

դոկտորների, թեկնածուների, երիտասարդ աշխատակիցների թվակազմը, բազային, թեմատիկ և գրանտային ծրագրերի ծավալները, միջազգային համագործակցության մակարդակը, սարքավորումների վիճակը, տպագրվող գիտական հոդվածների քանակը և ներգրավվածությունը վարկանշային ամսագրերում:

«Գիտության ամբողջ համակարգը ինտեգրել միջազգային գիտակրթական տարածքին,- սա է ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի առաքելությունը,- ասում է կառույցի ղեկավար Սամվել Հարությունյանը: Ըստ նրա, ԳՊԿ-ն պետք է ունենա որոշակի ազատություն, որը չունեի ԿԳՆ գիտության վարչությունը: ԳՊԿ նախագահն իր ղեկավարած կառույցի ԿԳՆ կազմում գտնվելը համարում է «ոչ այնքան հաճելի կարգավիճակ», քանի որ գիտության ու գիտնականների համար ակնկալում է ազատության ավելի մեծ աստիճան: Իսկ առայժմ ԳՊԿ-ի՝ կառավարություն ներկայացվող յուրաքանչյուր փաստաթղթի վրա պետք է լինի կրթության և գիտության նախարարի ստորագրությունը:

Հայաստանում կա բավականին մեծ գիտական ներուժ: Այսպես, 1994թ-ից մինչև այսօր գրանտային ծրագրերին հատկացված հանրագումարը կազմում է շուրջ 150 մլն դոլար, իսկ այդ ծրագրերն իրականացնողների թիվը հասնում է 1200: Տարեկան շուրջ 500-600 գիտական աշխատանք տպագրվում է միջազգային հեղինակավոր ամսագրերում:

ԳՊԿ-ի առաջիկա լուծելի խնդիրներից է միավորել մասնագիտությամբ մոտ և նույն խնդիրներով զբաղվող ինստիտուտները՝ բյուջեի գումարներն առավել նպատակային ծախսելու համար: Արդյունքում ազատված շենքերը կարելի է օգտագործել որպես մագիստրոսական լսարաններ, ուսանողական լաբորատորիաներ: Սա դիտարկվում է որպես գիտություն-կրթություն կապի ուժեղացմանը նպաստող քայլ, երբ բուհը ինստիտուտի հետ համատեղ կպատրաստի ապագա մասնագետներ: Խնդրի այլ կողմն է հասնել նրան, որ գործատուն ձևավորի բուհ պետպատվերով ընդունվող ուսանողների թիվը: Հայաստանում նման փորձ դեռևս չկա:

ԳՊԿ-ն ֆինանսավորում է 130 հիմնարկ, այդ թվում մոտ 80 գիտական ինստիտուտ: Կառավարությանը ներկայացված է ֆինանսավորման նոր կարգի նախագիծը, որի սկզբունքն է գիտաշխատողին վարձատրել արած աշխատանքի դիմաց՝ հիշեցնելով, որ աշխատավարձը սոցիալական նպաստ չէ: Ներկայիս գիտության մեջ բացակայում է նորմալ սերնդափոխությունը: Շուտով ԳՊԿ-ն կառավարություն է ներկայացնելու գիտության երիտասարդացման ծրագիրը, որով նախատեսվում են բազմաթիվ բարեփոխումներ, այդ թվում բնակֆոնդի հատկացումներ՝ մատչելի վարկային սկզբունքով: Նպատակ կա մինչև 30 տարեկան թեկնածուների և 45 տարեկան դոկտորների համար իրականացնել հավելավճարի նոր համակարգ՝ աշխատավարձի կրկնապատկմամբ: Այս տարի հայտարարվելու է գրանտային ծրագրերի մրցույթ մինչև 30 տարեկան գիտնականների համար:

Այս տարի պետական բյուջեի միջոցներից 2,5 անգամ ավելացվել են ինստիտուտների տնտեսական ծախսերը, ընդ որում դրանց բյուջեի 75% կազմում է աշխատավարձային ֆոնդը և 25%՝ տնտեսական մասը: Մինչև 2012թ. միտում կա մոտենալ եվրոպական ստանդարտներին, ըստ որոնց այդ թվերը կազմում են

համապատասխանաբար 55% և 45%: ԳՊԿ նախագահը մեծ առաջխաղացում է համարում այն, որ գրեթե չկան ձմռանը չջեռուցվող գիտական հիմնարկներ:

Ապագայի խնդիրներից է գիտական արդյունքների առևտրայնացումը, որը Հայաստանում շատ ցածր մակարդակի է: Ձեռներեցներին հասու դարձնել այն գաղափարը, որ արտասահմանից գնվող տեխնոլոգիաների համարժեքներն ավելի էժան և որակով կարող են տալ մեր գիտնականները` բավականին բարդ է: Համոզել խոշոր գործատուին որևէ ինստիտուտ ներգրավել իր կառույցի աշխատանքներում` դժվար խնդիր է: Այն կարող է դառնալ լուծելի վենչուրային ռիսկային հիմնադրամների գործադրմամբ, երբ պետությունը իր վրա վերցնի պատվերի ֆինանսավորման ռիսկի մի մասը: «Իմիջիայլոց, - հիշեցնում է Գիտության պետական կոմիտեի ղեկավար Սամվել Հարությունյանը,- եվրոպական երկրներում գիտության ֆինանսավորման միայն 30%-ն է ընկած պետության վրա, մնացած 70%-ը իրականացնում է մասնավոր բիզնեսը»:

Իսկ առայժմ շատ ու շատ գիտաշխատողներ շարունակում են աշխատել գիտական տարբեր օջախներում սահմանված նվազագույն աշխատավարձով: Գիտության թեկնածուները` 10000, իսկ դոկտորները` 20000 դրամ հավելավճարներով, որոնք, ըստ օրենքի, հարկման ենթակա չեն և պետք է վճարվեն աշխատավարձից առանձին: